## Նպատակ

Նկարների և պարզ պատմությունների հիման վրա խոսքը շարահյուսորեն ճիշտ կառուցելու հմտության ձևավորում, բառապաշարի հարստացում և ճանաչողական ոլորտի զարգացում:

## Ընթացք

Մեծահասակը երեխայի համար ընթերցում է տեքստը և նրան առաջարկում զուգահեռաբար ուսումնասիրել նկարը: Այնուհետև երեխային տրվում են հարցեր տեքստի վերաբերյալ: Յուրաքանչյուր նկարի մասին կա տարբեր բարդության երեք տեքստ: Տեքստերի համար առաջադրված են հարցեր: Կախված նրանից, թե որ տեքստն է ընթերցվում, տրվում են դրան համապատասխան հարցեր:

Երեխան սովորում է կազմել կապակցված պատմություն՝ հիմնված մի շարք սյուժետային նկարների վրա, ճիշտ հասկանալ դրանց բովանդակությունը և իրադարձությունների հաջորդականությունը:

# ԹԵՅԱԽՄՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՐԲԵՐԱԿ 1

Սա խոհանոց է: Այստեղ կա գազօջախ, լվացարան, պահարան: Գազօջախի վրա դրված է ջրով լի թեյնիկ: Ջուրը եռում է: Ընտանիքը պատրաստվում է թեյ խմել:

## ՏԱՐԲԵՐԱԿ 2

Արայի ընտանիքը նստած է խոհանոցում: Գազօջախի վրա դրված է ջրով լի թեյնիկ: Արայի ընտանիքը պատրաստվում է թեյ խմել: Տատիկը թեյը սիրում է խմել կիտրոնով, իսկ Արան՝ թխվածքաբլիթով:

## ՏԱՐԲԵՐԱԿ 3

Արայի ընտանիքը նստած է խոհանոցում: Մայրիկը թեյնիկի մեջ լցրեց ջուր և դրեց գազօջախի վրա: Ջուրը սկսում է եռալ, բոլորը պատրաստվում են թեյ խմել: Մայրիկը թեյը սիրում է կաթով, հայրիկը՝ մեղրով, տատիկը՝ կիտրոնով, իսկ Արան՝ թխվածքաբլիթով:

**Հարցեր**

1. Ի՞նչ կա խոհանոցում:
2. Ի՞նչ է պատրաստվում անել ընտանիքը:
3. Որտե՞ղ է նստած Արայի ընտանիքը:
4. Ի՞նչ է դրված գազօջախին:
5. Ի՞նչ լցրեց մայրիկը թեյնիկի մեջ:
6. Ե՞րբ կարող են թեյ խմել:
7. Ինչո՞վ է սիրում խմել թեյը մայրիկը, հայրիկը, տատիկը:
8. Ինչո՞վ է սիրում խմել թեյը Արան (հարցը կարող եք ուղղել նաև երեխային):

# ԱՆՏԱՌՈՒՄ

## ՏԱՐԲԵՐԱԿ 1

Ամառ էր: Դավիթը զբոսնում էր անտառում: Նա զամբյուղով սունկ էր հավաքել: Դավիթը հոգնեց և նստեց: Նա իր հացը կիսեց շնիկի հետ:

## ՏԱՐԲԵՐԱԿ 2

Դավիթն անտառում էր: Նա սունկ հավաքելուց հոգնել էր: Որպեսզի հանգստանա, նստեց կաղնու տակ՝ խոտերի վրա: Դավիթը հանեց հացը, կիսեց և մի մասը տվեց իր շնիկին:

## ՏԱՐԲԵՐԱԿ 3

Դավիթը զբոսնում էր անտառում: Շնիկը վազում էր նրա հետևից: Ամռանը անտառում հիանալի է. կան շատ ծաղիկներ և հատապտուղներ: Դավիթը սունկ հավաքելուց հոգնել էր: Նա ցանկացավ հանգստանալ: Նստեց կաղնում տակ, իսկ շունը պառկեց ոտքերի մոտ: Դավիթը ուսապարկից հանեց հացը, կիսեց երկու մասի, մի մասն իրեն պահեց, իսկ մյուսը տվեց շանը: Նրանք ուտում էին և հանգստանում: Հանկարծ ծառից կաղնու հատիկ ընկավ: Շունը հոտոտեց և չկերավ այն: Հացն ավելի համեղ էր:

**Հարցեր**

1. Տարվա ո՞ր եղանակն է նկարում:
2. Որտե՞ղ էր զբոսնում Դավիթը:
3. Ինչու՞ է ամռանը անտառում հիասքանչ:
4. Ի՞նչ էր հավաքել Դավիթը:
5. Ի՞նչ էին ուտում Դավիթն ու շնիկը:
6. Որտե՞ղ էին հանգստանում նրանք:
7. Որտեղի՞ց ընկավ կաղինը:
8. Ի՞նչ արեց շնիկը:
9. Ինչո՞ւ շնիկը չկերավ կաղինը:

# ԱՆԻՆ ԱՆՏԱՌՈՒՄ

## ՏԱՐԲԵՐԱԿ 1

Սա անտառ է: Անին անտառում է: Նա իր մոտ զանբյուղ ունի: Զամբյուղում հատապտուղներ են: Անի հոգնել էր և նստել կոճղին: Մի փոքր հանգստանալուց հետո նա վերադարձավ տուն:

## ՏԱՐԲԵՐԱԿ 2

Ամառ էր: Անին գնացել էր անտառ: Նա շատ հատապտուղներ էր հավաքել և շատ էր հոգնել: Անին զանբյուղը դրել էր գետնին և նստել կոճղին: Նա որոշել էր մի փոքր հանգստանալ և գնալ տուն:

## ՏԱՐԲԵՐԱԿ 3

Ամռան շոգ օրերից մեկն էր: Անին որոշեց վերցնել զամբյուղը և գնալ անտառ՝ հատապտուղներ հավաքելու: Արևը շողշողում էր, թռչունները ծլվլում էին: Նա հավաքել էր շատ հատապտուղներ: Անին հոգնել էր, զանբյուղը դրել գետնին և նստել կոճղին: Հանկարծ նրան մոտեցավ մի փոքրիկ սկյուռիկ: Անին նրան ելակ հյուրասիրեց: Սկյուռիկը վերցրեց հատապտուղները և վազեց իր ձագուկների մոտ: Աղջիկը ժպտաց սկյուռիկին և գնաց տուն:

**Հարցեր**

1. Տարվա ո՞ր եղանակն էր:
2. Ի՞նչ էր իր հետ վերցրել Անին:
3. Ի՞նչ հատապտուղներ է հավաքել Անին:
4. Ինչու՞ էր Անին նստել:
5. Ո՞վ մոտեցավ նրան:
6. Ի՞նչ հյուրասիրեց աղջիկը սկյուռիկին:
7. Սկյուռիկը ելակներն ու՞մ տարավ:
8. Ինչպե՞ս ավարտվեց պատմությունը:

# ՏԱՏԻԿԻ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԸ

## ՏԱՐԲԵՐԱԿ 1

Սա բանջարանոց է: Այնտեղ աճում է սոխ, սխտոր, վարունգ և լոլիկ: Բանջարանոցում աճում է նաև գազար: Տատիկը հավաքել է երեք գազար, որից պետք է պատրաստեի աղցան:

## ՏԱՐԲԵՐԱԿ 2

Բանջարեղենն աճում է բանջարանոցում: Այս բանջարանոցում կա սոխ, սխտոր, վարունգ և լոլիկ: Այստեղ նաև մի մեծ դդում է աճել: Դիմացի մարգում աճում է գազար: Տատիկը հավաքել է երեք գազար՝ համեղ աղցան պատրաստելու համար:

## ՏԱՐԲԵՐԱԿ 3

Ամռանը շոգ է: Արևը տաքացնում է հողը: Տաք հողում աճել է բանջարեղեն: Տատիկը շատ գոհ է: Այս տարվա բերքը առատ է: Բանջարանոցում աճել է նաև մի մեծ դդում: Դիմացի մարգում աճել են գազարներ: Տատիկը հավաքել է երեք գազար՝ համեղ աղցան պատրաստելու համար:

**Հարցեր**

1. Տարվա ո՞ր եղանակին է շոգ:
2. Ի՞նչ է անում արևը:
3. Որտե՞ղ է աճում բանջարեղենը:
4. Ինչու՞ է տատիկը գոհ:
5. Ի՞նչ բերք է հավաքել տատիկը:
6. Քանի գազար է հավաքել տատիկը:
7. Ի՞նչ է պատրաստելու տատիկը:

# ԱՆՆԱՅԻ ՓՈՔՐԻԿ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ

## ՏԱՐԲԵՐԱԿ 1

Սա Աննան է: Նա ունի շատ տիկնիկներ: Աննայի տիկնիկի անունը Անուշ է: Տիկնիկի ոտքը ցավում է: Անուշը պառկած է անկողնում: Աննան բուժում է նրան.

-Մի՛ հիվանդացիր, Անու՛շ,- ասում է Աննան:

## ՏԱՐԲԵՐԱԿ 2

Աննան ստեղծել է փոքրիկ հիվանդանոց: Նա բուժում է տիկնիկին, փափուկ արջուկին, նապաստակին և շնիկին: Տիկնիկի անունը Անուշ է: Նրա ձախ ոտքը ցավում է: Նա պառկած է անկողնում: Աննա փաթաթում է տիկնիկի ոտքը և ասում. «Մի՛ հիվանդացիր, Անու՛շ»:

## ՏԱՐԲԵՐԱԿ 3

Աննան ցանկանում է իր մայրիկի նման բուժել մարդկանց: Նա ստեղծել է փոքրիկ հիվանդանոց տիկնիկների համար: Նրա մոտ գալիս են բուժվելու փափուկ արջուկը, նապաստակը և տիկնիկը, որի անունը Անուշ է: Անուշը վնասել է ձախ ոտքը, այդ պատճառով նա պառկած է մահճակալին: Աննան վիրակապում է տիկնիկի ոտքը: Շնիկն օգնում է Աննային: Նա իր բերանում պահում է դեղահաբեր: Աննան սիրում է իր տիկնիկների հետ խաղալ:

**Հարցեր**

1. Ի՞նչ էր աղջկա անունը:
2. Ո՞ւմ էր բուժում Աննան:
3. Ո՞ւմ էր նա ցանկանում նմանվել:
4. Տիկնիկ Անուշի ի՞նչն էր ցավում:
5. Ինչպե՞ս բուժեց Աննան տիկնիկի ոտքը:
6. Ո՞վ էր օգնում Աննային:

# ՇԱԲԱԹՕՐՅԱԿ

Շաբաթ օր էր: Մայրիկն ասաց, որ պետք է տունը մաքրել: Մայրիկը լվանում է հատակը, աղջիկը ջրում է ծաղիկները, իսկ հայրիկը փոշեկուլով մաքրում է հատակը և բազմոցը: Կատուն բարձրացել է բազմոցի հենակին և դժգոհ մլավում է, քանի որ ընկել էր ջրով լի ամանի մեջ:

**Հարցեր**

1. Շաբաթվա ո՞ր օրն է պատկերված նկարում:
2. Ի՞նչ ասաց մայրիկը:
3. Ո՞վ էր լվանում հատակը:
4. Ի՞նչ էր անում աղջիկը:
5. Ի՞նչն էր մաքրում հայրիկը:
6. Ինչու էր կատուն դժգոհությամբ մլավում:

# ԱՐԱՄԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Արամն ունի շատ ավտոմեքենաներ: Մեքենաները «գնում են» խանութ, անտառ, դպրոց: Արամը յուրաքանչյուր ավտոմեքենայի համար պատրաստել է ավտոտնակ: Կապույտ ավտոմեքենաների համար նա պատրաստել է կապույտ ավտոտնակ, դեղին ավտոմեքենաների համար՝ դեղին, իսկ կանաչ մեքենան չունիավտոտնակ և կանգնած է տնակի դիմաց:

**Հարցեր**

1. Ի՞նչ խաղալիքներ ունի Արամը:
2. Ու՞ր են գնում մեքենաները:
3. Ի՞նչ է պատրաստել Արամը իր ավտոմեքենաների համար:
4. Ի՞նչ գույնի ավտոմեքենաներ ունի Արամը:
5. Ո՞ր մեքենան չունի ավտոտնակ:
6. Ո՞րտեղ է կանգնած կանաչ ավտոմեքենան: